ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

14 հունվարի 2016 թվականի N 03-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, 58-րդ հոդվածով, հաշվի առնելով ընդերքի պետական տեսչության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի գրությունը, <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2016 թվականի հունվարի 11-ի թիվ Ֆ-01/16 գրությունը և <Ֆիրմա Մարտին> ՍՊ ընկերության կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերի օրենսդրության պահանջներին համապատասխանությունը՝

Հրամայում եմ

1. <Ֆիրմա Մարտին> ՍՊ ընկերությանը տրամադրել հանքային իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:
2. Ուժը կորցրած ճանաչել՝ <Ֆիրմա Մարտին> ՍՊ ընկերությանը ՀՀ Արարատի մարզի Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման համար, 2012 թվականի դեկտեմբերի 28-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/396 թույլտվությունը, լուծել՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ին կնքած օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-396 պայմանագիրը և չեղյալ ճանաչել լեռնահատկացման ԼՎ-396 ակտը:
3. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*
- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. *<<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին* – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ